2006, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (232)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

### *Հոկտեմբերի 16-ին* Ռումինիայի դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ռումինիայի Հանրապետության դեսպան Ն. Իորդակեին:

Հրաժեշտ տալով Ամենայն Հայոց Հայրապետին՝ պրն Իորդակեն շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ իր եւ իր երկրի նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի համար: Դեսպանը վստահություն հայտնեց, որ Հայաստան-Ռումինիա հարաբերություններն այսուհետ եւս կզարգանան ինչպես պետական, այնպես էլ միջեկեղեցական մակարդակներով:

*«Մեր բարեկամությունը դարերով է փորձված, եւ վստահ ենք, որ այն հետագայում առավել կսերտանա ու կխորանա»,-* իր հերթին ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ ամեն տարի Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ մեկնում են Ռումինիա՝ բարձրագույն ուսումը շարունակելու նպատակով:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը նորանոր հաջողություններ մաղթեց դեսպանին՝ իր հետագա առաքելության ընթացքում:

### *Հոկտեմբերի 17-ին* Ֆրանսիայի դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Անրի Կյունիին:

*«Մենք անչափ ուրախ ենք, որ այսքան տարիներ առիթ ունեցանք վայելելու Ձեր ներկայությունը Հայաստանում եւ մտերմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ: Տեսել ենք Ձեր հոգում առկա սերը Հայաստանի եւ հայ ժողովրդի նկատմամբ»,-* ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ այն աջակցությանն ու զորակցությանը, որ Ֆրանսիան տարբեր ոլորտներում մշտապես ցուցաբերել է հայ ժողովրդին:

Իր տպավորությունները Հայաստանում ծառայության շրջանի մասին ներկայացրեց նաեւ պրն Կյունին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհակալություն հայտնելով դեսպանին՝ մատուցած ծառայությունների համար, հաջողություններ մաղթեց նրան՝ իր հետագա առաքելության ընթացքում:

### Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի անդամներին



Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի պատվիրակությանը՝ հանձնաժողովի համանախագահ ՌԴ Դաշնային խորհրդի անդամ Նիկոլայ Ռիժկովի գլխավորությամբ:

*«Հաճելի է տեսնել, որ հարաբերությունները երկու երկրների միջեւ շարունակում են զարգանալ, եւ աշխատանք է տարվում դարերով ձեւավորված այդ բարի ավանդույթները պահպանելու ու զորացնելու համար»,-* ասաց Նորին Սրբությունը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ տիար Ռիժկովը Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի աշխատանքները եւ կարեւորեց Ռուսաստան-Հայաստան համագործակցության, հարաբերությունների հետագա սերտացումն ու ամրապնդումը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը մտահոգություն հայտնեց Ռուսաստանում հայերի նկատմամբ տեղ գտած որոշ երեւույթների առնչությամբ:

*«Մենք արմենոֆոբիա չունենք եւ չենք էլ կարող ունենալ. հայ համայնքը շատ ամուր է ինտեգրված մեր կյանքին: Հայկական սփյուռքը տարածված է երկրով մեկ, եւ մենք միասին ապրում ենք կողք կողքի»,-* ասաց Ն. Ռիժկովը եւ վստահեցրեց, որ ամեն ինչ պիտի անեն, որ երբեք այդ երեւույթները չկրկնվեն:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին եւ գործակցությանը:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Տիրոջ օրհնությամբ սերը, հարգանքը եւ եղբայրությունն առավել ամրապնդվեն երկու դարավոր բարեկամ ժողովուրդների միջեւ:

## Վեհափառ Տեր

*Յոթ տարի առաջ՝ նոյեմբերի 4-ին Աստծո եւ ժողովրդի կամքի արտահայտությամբ Սուրբ Լուսավորչի փառավոր գահը հանձնվեց Ձերդ Սրբությանը: Մեծ ժամանակի մեջ Ձեր գահակալության այս տարիներն ակնթարթներ են լոկ, սակայն Ձեր կատարած գործերը զարմանք ու հիացմունք են պատճառում՝ իրենց քանակով ու բազմակողմանիությամբ, իրենց նվիրումով ու անմնացորդ սիրով՝ ի հեճուկս հարուցվող բոլոր դժվարությունների ու խնդիրների, հոգնության ու ապրումների: Մենք, որ Ձեր կողքին ենք ու փորձում ենք մեր քիչը բերել Մայր Եկեղեցու շենացմանը, լավ գիտենք, թե ինչպես է սկսվում ու ավարտվում Ձեր՝ ժամ ու ժամանակ չունեցող օրը: Ուստի մեր սերն ու երախտագիտությունը, մեր գնահատանքն ու հավատարմությունը հայտնելով Ձեզ՝ հայցում ենք ամենակարող Տիրոջ օրհնությունն ու օգնականությունը Ձեզ եւ ի սրտե մաղթում կենաց արեւշատություն, առավել արգասավոր ու արդյունաշատ օրեր ու տարիներ՝ Ձեր աստվածահաճո եւ ազգանվեր ազնիվ առաքելության մեջ:*

*Մատչիմ ի համբոյր Ձերդ օծեալ սուրբ աջոյն՝*

*«Քրիստոնյա Հայաստան» թերթի աշխատակազմ*

### *Հոկտեմբերի 18-ին* Իտալիայի արտաքին գործոց փոխնախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Արտաքին գործերի փոխնախարար Ֆամիանո Կրուչիանելլիին՝ ՀՀ-ում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Ողջունելով հյուրին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները շարունակաբար զարգանում եւ ամրապնդվում են: Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Իտալիայի իշխանություններին եւ ժողովրդին այն զորակցության համար, որ ցուցաբերվում է տարածաշրջանում խաղաղությունն ամրակայելու գործում:

Վեհափառ Հայրապետը ներկայացրեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի միջեւ առկա հարաբերությունները եւ սերտ համագործակցությունը, ինչի շնորհիվ չորս երիտասարդ միաբաններ ներկայումս ուսանում են Կաթոլիկ Եկեղեցու տարբեր կրթական հաստատություններում:

Հանդիպման ընթացքում նաեւ անդրադարձ եղավ ժողովրդի սոցիալական վիճակին, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը եւ Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններին:



*Տես՝ էջ 2*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Հոկտեմբերի 23-ին ՉԺՀ Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական ժողովի փոխնախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական ժողովի փոխնախագահ Սյու Ցզյալուի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ-ում ՉԺՀ դեսպան Ցզո Սյուեյյանի ուղեկցությամբ:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայաստանի եւ Չինաստանի միջեւ տարեցտարի ամրացող եւ սերտացող հարաբերությունների համար՝ նկատելով, որ դրանց արմատները ձգվում են մինչեւ վաղ միջնադար: Վեհափառը վստահություն հայտնեց, որ այդ հարաբերությունների զորացումը երկուստեք շահեկան է լինելու:

Պրն Սյու Ցզյալուն եւս կարեւորեց դարերի ավանդույթներ ունեցող Հայաստան երկրի հետ համագործակցության եւ բարեկամության առավել ամրապնդումը: Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում այլ կրոնների նկատմամբ հանդուրժողականության ու հարգանքի, կրոնական խաղաղ համակեցության մասին:



### Հոկտեմբերի 24-ին Բելառուսի վարչապետին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բելառուսի Հանրապետության վարչապետ Սերգեյ Սիդորսկուն՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանի ուղեկցությամբ:

Ողջունելով Բելառուսի Հանրապետության վարչապետին՝ Ամենայն Հայոց Հայրապետը ներկայացրեց Մայր Աթոռի հիմնադրման պատմությունը եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ-բելառուս հարաբերությունների առավել սերտացման ու զորացման առիթով՝ դրանք նկատելով բնական հետեւությունը հայ եւ բելառուս ժողովուրդների դարավոր բարեկամության: Նա նաեւ շնորհակալություն հայտնեց Բելառուսի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ ունեցած ուշադիր եւ հոգատար վերաբերմունքի համար՝ վստահություն հայտնելով, որ իշխանությունները զորակցություն ցույց կտան հայ համայնքին Բելառուսում հայկական եկեղեցու կառուցման գործում:

Բելառուսի Հանրապետության վարչապետն իր հերթին Նորին Սրբությանը ներկայացրեց հանրապետության կրոնական խճանկարը: Նա հանգամանորեն անդրադարձավ իր երկրում պետություն-եկեղեցի հարաբերություններին՝ մեծապես կարեւորելով եկեղեցու դերը հասարակության հոգեւոր զարգացման գործում:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, երկու երկրների դեսպանները:

### Մարդկային արժանապատվության եւ անվտանգության պաշտպանության միջազգային լիգայի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Պետդումայի պատգամավոր, Մարդկային արժանապատվության եւ անվտանգության պաշտպանության միջազգային լիգայի նախագահ, բանակի գեներալ Վալենտին Վարեննիկովին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի եւ ՀՀ վարչապետի խորհրդական Ֆադեյ Սարգսյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց հյուրերին՝ շնորհավորելով Հայաստանում Մարդկային արժանապատվության եւ անվտանգության պաշտպանության ազգային լիգայի հիմնման առիթով: «Ուրախ ենք, որ այսօր ավելանում է մեր համախոհների թիվը, ովքեր նաեւ մտահոգվում են ներկա կյանքի մարտահրավերներով»,- նշեց Վեհափառ Հայրապետը:



Ապա պրն Վարեննիկովը Նորին Սրբությանը ներկայացրեց լիգայի գործունեությունը եւ ծրագրերը՝ վստահություն հայտնելով, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւս կսատարի ազգային լիգային նրա գործունեության մեջ:

### Հոկտեմբերի 25-ին Շվեդիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Շվեդիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս Գունար Ադենին եւ ՀՀ-ում Շվեդիայի պատվո հյուպատոս Էդիտ Խաչատրյանին:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրին, ուրախություն հայտնեց երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների խորացման առիթով: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Շվեդիայում հայ համայնքի ու նրա հոգեւոր կյանքի կազմակերպմանը, շնորհակալություն հայտնեց իշխանությունների կողմից նորակազմ համայնքին ցուցաբերվող աջակցության համար:

Նորանշանակ դեսպանն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար եւ հույս հայտնեց, որ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունները կնպաստեն հայ-շվեդական հարաբերությունների զարգացմանը տարբեր ոլորտներում:

## Հնագրության ալբոմի շնորհանդես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հոկտեմբերի 14-ին՝ Սրբոց Թարգմանչաց տոնի օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի հանդիսությունների դահլիճում, տեղի ունեցավ «Հայ հնագրության ալբոմի» հայերեն հրատարակության շնորհանդեսը: Արարողությունը հանդիսապետում էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



«Հայ հնագրության ալբոմը» Մայքլ Սթոունի, Տիգրան Գույումճյանի եւ Հենինգ Լեհմանի համահեղինակությամբ առաջին անգամ անգլերեն լեզվով հրատարակվել է 2002 թ. Դանիայում՝ «Աարհուս» համալսարանական հրատարակչության ջանքերով: 2006 թ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ եւ «Դոլորես Զոհրապ Լիբման» հիմնադրամի աջակցությամբ՝ իրականացվեց ալբոմի հայերեն տարբերակի հրատարակումը: Գրքի խմբագրական եւ թարգմանական աշխատանքները կատարվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոնի տնօրեն Ազատ Բոզոյանի եւ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատողներ Արամ Թոփչյանի ու Գոհար Մուրադյանի ջանքերով: Տպագրված լինելով «Տիգրան Մեծ» հրատարակչությունում՝ այն իր բարձր որակով չի զիջում անգլերեն տարբերակին:

Բացման խոսքով հանդես եկավ պրն Ազատ Բոզոյանը:

Ալբոմի հեղինակների անունից ելույթ ունեցավ Ֆրեզնոյի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Տիգրան Գույումճյանը: Հանդիսությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ալբոմի լույս ընծայմանը մասնակից բոլոր անձանց՝ հեղինակներին, հովանավոր հիմնադրամին՝ գլխավորությամբ տիար Մ. Հայգենցի, խմբագիրներին, թարգմանիչներին, «Տիգրան Մեծ» հրատարակչատանը: *«Այս գործը կարեւոր նշանակություն պիտի ունենա այն ուսումնասիրողների համար, ովքեր զբաղվում են հայ գրչության պատմությամբ եւ արվեստով: Եվ վստահ ենք, որ հրատարակված լինելով նաեւ անգլերեն լեզվով՝ այն լավագույնս պիտի ծառայի նաեւ մեր մշակույթի ճանաչողությանը՝ օտարների կողմից»*,- նշեց Նորին Սրբությունը:

Հանդիսության ընթացքում համերգային ծրագրով հանդես եկավ Հայաստանի կամերային նվագախմբի լարային քառյակը:

## Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցանակաբաշխություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հոկտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ եւ մասնակցությամբ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի տեղի ունեցավ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցանակաբաշխություն:

Սա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից Հայաստանում անցկացվող հանրակրթական դպրոցների ուսուցիչների երրորդ մրցույթն է: Մրցույթի հաղթողներին, ավանդույթի համաձայն, Նորին Սրբությունն անձամբ հանձնում է վկայականներ եւ դրամական պարգեւներ:

Ուսուցիչների մեծարման հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանի ողջույնի խոսքով:

«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի ծրագիրը եւ իրականացված աշխատանքները ներկայացրեց ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության պետ տիկ. Նարինե Հովհաննիսյանը:

Ապա «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ Եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու եւ գրականություն» եւ բնագիտական առարկաների քառասունչորս ուսուցիչներ Ամենայն Հայոց Կաթողիկոսից ու ԿԳ նախարարից ստացան վկայականներ եւ խրախուսական մրցանակներ:

Ուսուցիչների անունից շնորհակալական խոսքով հանդես եկավ տիկ. Անահիտ Հովսեփյանը (Տավուշի մարզ):

Հանդիսությանը ներկա էին նաեւ «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հովանավորներ Իրմա եւ Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերը (ԱՄՆ), որոնց ազնիվ բարերարությամբ նաեւ տպագրվել էր «Հայ Եկեղեցու պատմության» դասագրքերի մեթոդաբանական ձեռնարկը:

Հանդիսության կարեւորության մասին իր մտածումները ներկայացրեց ՀՀ Կրթության եւ գիտության նախարարը՝ կարեւորելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության միջեւ սերտ համագործակցությունը եւ խորին շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ կրթական ոլորտի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար:

Հանդիսության ավարտին իր խոսքն ու պատգամը ներկաներին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: *«Ուսուցիչ լինելը մեծ պատիվ է եւ պատասխանատվություն. այն նշանակում է պատասխանատվություն կրել ազգի լինելության, այդ լինելության որակի համար: ... Այսօր այդ բարի ավանդույթների կրողն եք դուք, ձեզ է հանձնված կերտելու մեր ժողովրդի նորօրյա պատմությունը»*,- մասնավորաբար նշեց Նորին Սրբությունը:

Հայոց Հայրապետը նաեւ ուրախություն հայտնեց Իրմա եւ Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերի ներկայության առիթով՝ իր օրհնությունը բերելով նրանց: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը բերեց ԿԳ նախարարին եւ նախարարության ողջ պաշտոնեությանը, ովքեր լայն հնարավորություններ բացեցին Եկեղեցու առջեւ, որպեսզի վերջինս կարողանա դարերի իր առաքելությունը նաեւ ներկա ժամանակի պայմաններում իրականացնել եւ իր նպաստը բերել կրթության նվիրական գործում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ

## (1166-1173)

*Սկիզբը՝ թիվ 19*

Ներսես Շնորհալին հարկադրված էր եկեղեցական գործերով առնչություններ ունենալ կայսրության հետ, որոնց սկիզբը դրվեց Ալեքս դքսի հետ ունեցած զրույցներով եւ հատուկ գրության պատրաստմամբ, որն Ալեքսն իր մոտ պահեց, եւ պաշտոնը լրանալուն պես՝ 1165 թվի վերջերից շատ չանցած, գալով Կոստանդնուպոլիս, հանձնեց Մանվել կայսրին եւ Ղուկաս պատրիարքին: Թե՛ գրությունը եւ թե՛ Ալեքսի տված լրացուցիչ տեղեկությունները բարենպաստ կարծիք ձեւավորեցին Ներսես կաթողիկոսի վերաբերյալ բյուզանդական արքունիքում եւ պատրիարքարանում: Բյուզանդական իմաստունները գովել են թե ոչ հայոց հավատը, դժվար է ասել, սակայն անկասկած է, որ գրությունը նրանց հաստատ մտածել է տվել: Հայերի ուղղափառությունը հազիվ թե արժանացավ բյուզանդացիների հավանությանը, սակայն կարելի է կարծել, որ նրանք այն համոզման եկան, որ թերեւս հնարավոր լինի երկու եկեղեցիները միավորել, եւ դրանով իսկ հայերին հպատակեցնել, քանի որ, եթե հայրապետանոցը Հռոմկլայի կայսերական ազդեցությունից դուրս էր, ապա Ռուբինյանների եւ Օշինյանների իշխանությունները լրիվ կամ ձեւականորեն ենթարկվում էին կայսրությանը: Այսուհանդերձ միայն Մամեստիայի հանդիպումից երկու տարի անց Մանվել կայսրը նամակ գրեց հայոց՝ արդեն մահացած կաթողիկոս Գրիգորին (1167 թվի սեպտեմբեր), որտեղ բարձրացվում է եկեղեցական միության խնդիրը: Կայսրը կաթողիկոսին առաջարկում է իր եղբորը Կոստանդնուպոլիս ուղարկել, որտեղ սրբազան պատրիարքը եւ հրավիրված եկեղեցական ժողովը կարող են միության գործը քննության առնել եւ որոշում կայացնել: Պալատականներից մեկը՝ Սմբատ անունով մի հայ, ուղարկվում է նամակով, որպեսզի կաթողիկոսի եղբորը մայրաքաղաք ուղեկցի: Դժվար չէ տեսնել, որ կայսրը շատ անհավասար վիճակի մեջ էր փորձում դնել հայերին՝ Ներսեսին միայնակ ներկայացնելով կայսերը, պատրիարքին եւ սյունհոդոսին:



Սմբատը ժամանեց Հռոմկլա, որտեղ կաթողիկոս էր Ներսեսը: Վերջինս կայսեր գաղտնի մտքերը գուշակեց եւ իր հերթին աշխատեց բյուզանդացիների ծրագիրն ուղղել նրանց դեմ: Նա, առատ գովեստներ շնորհելով կայսերը, համեստորեն հասկացնել տվեց Մանվելին, որ եղբոր մահից հետո ինքն այլեւս չի կարող հայրապետանոցը թողնել անտերունչ վիճակում: Միաժամանակ հասկացվում էր, որ միայնակ մտադիր չէ հանդիպել բյուզանդական եկեղեցական շրջանակներին, սակայն նաեւ ոչինչ չէր ասվում այլ անձ ուղարկելու մասին: Եվ ավելին. նա, հորդորներ կարդալով, կայսրին հրավիրում է Արեւելք՝ փաստորեն բյուզանդացիների ծրագիրն ուղղելով նրանց դեմ: Ասվում էր, որ եկեղեցիների միության գործը կարող է հաջողվել քաղցրագույն խոնարհությամբ եւ ոչ թե թագավորական ահարկու զորությամբ, քանի որ բաժանումն արդեն 700 տարուց ավելի է եւ ծնունդ է երկրորդ բնության հնացած սովորության: Դժվար չէ տեսնել, որ հայոց հայրապետն ակնարկում է Քաղկեդոնի 451 թվականի երկաբնակ ժողովը եւ միաժամանակ բյուզանդացիներին մեղադրում է եկեղեցիների ավերման, Աստծու սեղանի կործանման, Քրիստոսի նշանների խորտակման, պաշտոնյաներին բազում նեղություններ պատճառելու եւ այլ մեղքերի մեջ, որոնք ստիպել էին հայերին հեռանալ բյուզանդացիներից, եւ որ վերջիններիս քաղաքականությունը ոչ միայն չի նպաստել միավորմանը, այլեւ կարող էր



միավորյալներին պառակտել: Ներսես Շնորհալին միաժամանակ առաջարկում է աղոթել այդ գործի համար ու նշում, որ այդ ընթացքում Հռոմի պատրիարքը պատգամավորներ է ուղարկել Կոստանդնուպոլիս՝ միաբանության առաջարկով, որ ասորվոց պատրիարքն էլ իրեն է դիմել այդ խնդրով, ուստի այդ ամենը նախախնամական համարելով՝ նա առաջարկում է միությունը հաստատելու համար մեծ ժողով գումարել: Սակայն միաժամանակ նշվում է, որ դա չպետք է լինի տերերի՝ ծառաների հետ կամ ծառաների՝ տերերի հետ խոսելու եղանակով, այլ՝ հիմնված առաքյալների ու մարգարեների, Եկեղեցու վարդապետների գրքերի վրա: Եվ եթե պարզվի, որ Եկեղեցիներից որեւէ մեկը թերացել է՝ լինեն հայերը, բյուզանդացիները թե ուրիշներ, պետք է հրաժարվեն սխալներից: Ըստ որում, նա հայերի կողմից պատրաստակամություն է հայտնում դրանք ուղղելու՝ պայմանով, որ նույնն անի Բյուզանդական Եկեղեցին:

Հարկ է խոստովանել, որ միությունն իրականացնելու առաջին ծրագիրը սկսվեց Ներսես Շնորհալու նախաձեռնությամբ՝ Մամեստիայում Ալեքս դքսի հետ ունեցած տեսակցությամբ: Անշուշտ, հայոց հայրապետը, հաշվի առնելով այլազգիների իշխանությունը եւ քրիստոնյաների տկարանալը, դրա հետեւանքները, վիճակից դուրս գալու ելքը տեսնում էր քրիստոնյաների միավորման մեջ եւ դրա իրականացումը համարում էր իր պարտքը: Սակայն այն չպետք է կյանքի կոչվեր բյուզանդական թելադրանքի ներքո, եւ բոլոր Եկեղեցիները պետք է միասնական վճռի գային՝ հրաժարվելով իրենց սխալներից ու սխալմունքներից: Եկեղեցիներից եւ ոչ մեկը չպետք է մյուսի վրա բռնանար, եւ բոլորը կարող էին առաջնորդվել իրենց սովորություններով: Սա, անշուշտ, Հայոց Եկեղեցու սկզբունքն է, որի հետ համաձայն չէին ո՛չ հունադավան եւ ո՛չ էլ հռոմեադավան Եկեղեցիները:

*Շարունակությունը՝ էջ 4*

## Հաղորդագրություն

Սույն թվականի հոկտեմբերի 14-16-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ սեմինար՝ նվիրված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ «Հայ-դանիական առաքելություն» կազմակերպության միջեւ համագործակցությանը:

Սեմինարը բացեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Նա Վեհափառ Հայրապետի անունից ողջունեց մասնակիցներին եւ ներկայացրեց Հայ Եկեղեցու ներկայիս գործունեությունը: Այնուհետեւ հաջորդող երկու օրերի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ համագործակցության ուղիների եւ ոլորտների վերաբերյալ:

Հոկտեմբերի 16-ին հյուրերին ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ իր օրհնությունը բերեց սեմինարի մասնակիցներին:

Սեմինարի ավարտին պատրաստվեց մի համաձայնագիր եւ համագործակցության ծրագիր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ «Հայ-դանիական առաքելություն» կազմակերպության միջեւ:



***

Սույն թվականի հոկտեմբերի 18-ին, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը ցավակցական նամակ հղեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Սասիմայի մետրոպոլիտ Գենադիոս արքեպիսկոպոսին՝ Եփեսոսի մետրոպոլիտ Քրիզոստոմոս արքեպիսկոպոսի մահվան առիթով:

***Մայր Աթոռ Ս. Էջմիածնի***
***Միջեկեղեցական հարաբերությունների բաժին***

## ՎԻՐԱՀԱՅՈՑ թեմ

### Սրբոց Թարգմանչաց տոնը Թբիլիսիի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում եւ Հայ մշակույթի գործիչների պանթեոնում

Վիրահայոց թեմը, ըստ հին տոմարի, Թարգմանչաց տոնը նշեց հոկտեմբերի երրորդ շաբաթ օրը՝ 21-ին:

Առավոտյան Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, ի հիշատակ Սրբոց Թարգմանչաց, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Բաթումիի եւ Աջարիայի հայության հոգեւոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը: Հընթացս պատարագի՝ հոգեշնորհ հայր սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց, որով մեկ անգամ եւս շեշտեց հայոց լեզվի, դպրության եւ մշակույթի պահպանումը՝ մանավանդ մայր հայրենիքից դուրս:

Սուրբ պատարագին իրենց մասնակցությունն էին բերել Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը եւ համայնքային, գրական ու հասարակական այլ գործիչներ:

Պատարագից հետո, հոգեւոր դասի առաջնորդությամբ, հավատացյալ ժողովուրդը, մշակույթի գործիչների ու հայկական դպրոցների սաների եւ ուսուցիչների հետ, բարձրացավ Թբիլիսիի Հայ մշակույթի գործիչների պանթեոն, որտեղ հանգչում են 18-20-րդ դարերի հայ մեծանուն մտավորականներ ու ազգային-հասարակական գործիչներ:

Թիֆլիսի նախկին Խոջիվանքի գերեզմանատունը 1938 թվականին ավերվեց Բերիայի հրամանով եւ վերածվեց Բարեկամության զբոսայգու, որի արեւելյան անկյունում՝ Րաֆֆու մահարձանի շուրջը ստեղծվեց Հայ մշակույթի գործիչների պանթեոնը:

Վիրահայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ պանթեոնում կայացավ հոգեհանգստյան արարողություն, որում հիշատակվեցին Խոջիվանքում ամփոփված անվանի հայորդիները:



Տոնի կապակցությամբ պանթեոնում բացվել էր ցուցահանդես՝ Թբիլիսիի հայտնի նկարիչ եւ ուսուցիչ Ռոբերտ Ներսեսովի արվեստի ստուդիայի երիտասարդ նկարիչների մասնակցությամբ:

Հոգեհանգստյան պաշտոնի եւ տոնական հանդիսության ավարտին օրվա խորհրդով շնորհավորական եւ ողջույնի խոսքերով հանդես եկան թեմի առաջնորդ Վազգեն սրբազանը, Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը եւ Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասան Լեւոն Չիդիլյանը: Բանախոսները ցանկություն հայտնեցին, որ սույն միջոցառումը դառնա ավանդական: Նշենք, որ Թարգմանչաց տոնակատարության մեծաշուք հանդիսության սկիզբը Թբիլիսիում դրվեց 2005 թ-ից՝ հայոց գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարությունների շրջանակում:

***ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ***
***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ***

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ
# ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ



*Սկիզբը՝ թիվ 17-19*

Բացառիկ ի՞նչ ունակությունների տեր հզոր անհատականություն, եւ ի՞նչ դառը կյանք։

Կոպիտ իրականությունը ճզմել էր նրան իր թաթի տակ, առողջությունը՝ տկարացրել, սակայն յոթանասնամյա հասակում էլ միտքը պայծառ էր, ու գրիչը՝ վարժ։ Իշխանությունները վախենում էին նրանից. միշտ աչքն էին խոթում 1918 թ. գրած «Ցարը եւ Լենինը» ֆելիետոնը, ուր քննադատված էր կոմունիստների կուռքը։ Նրան հեռու էին պահում գրական անցուդարձից, անգամ նրա ողջ լինելն էին թաքցնում Սփյուռքում նրանով հետաքրքրվողներից։

Օրագրություններում Լեռ Կամսարն իր կենսագրությունից շատ տխուր ու ողբերգական դեպքեր է հիշում, որոնք առանց սարսուռի հնարավոր չէ կարդալ։ Կ. Մարքսի «Կեցությունն է բնորոշում գիտակցությունը» հանրահայտ ասույթը մի ճշմարտություն է, որ, թվում է, անվերապահ պիտի ընդուներ երգիծաբանը։ Բայց նա այդ աքսիոման չի ընդունում, որովհետեւ երբ փորձում է համեմատել ի՛ր կեցությունն ու գիտակցությունը, կանգնում է ճակատագրական հակասությունների առջեւ։

Իսկապես, ի՞նչ է եղել նրա կեցությունը, որ ունենար համապատասխան գիտակցություն եւ կազմեր իր աշխարհայացքը։ Վաղ մանկությունից նա բռնություն է տեսել ու դաժանություն, քանի՛ անգամ փախել է մերկացրած դաշույններով իր վրա հարձակվող թուրք լամուկներից, տեսել 1896-ի եւ հետագայի ջարդերը, խորհրդային իրարահաջորդ բռնությունները…

Սրանցով նա պիտի ձեւավորեր իր գիտակցությունն ու աշխարհայացքը։

Մանկության, պատանեկության, երիտասարդության տարիներին տեսած դաժանություններն այնպես էին մեխվել հիշողության մեջ, որ նրան հետապնդում ու հալածում էին նույնիսկ հասունության ու ծերության տարիներին։

1960 թ. օրագրերից մեկում կարդում ենք ինքնակենսագրական հետեւյալ խոստովանությունը.

«Ութ տարիս չլրացած, երբ սկսվեցին 96-ի հայկական կոտորածները, մտան մեր քովի տունը եւ կոտորեցին ծերից սկսած մինչեւ երեխա, ու ես, մորս ձեռքը բռնած, նորից փախա։

Բաց արի աշխարհայացքս ու վրան ավելացրի. …դանակներ եւ փախ ու կոտորած։

Հետագայում հայրս Պարսկաստան փախավ, ես Էջմիածին եկա սովորելու։

Ի՞նչ պիտի սովորեի. հարազատներից պոկված մի խեղճ պանդուխտ երեխա… Այս վշտերի մեջ ինքս ինձ մոռացած՝ չորս տարի հետո ո՞ր սատանի ծոցից դուրս թռավ Սաթենիկ անունով մի աղջիկ եւ եկավ մտավ սիրտս։ Դե արի ու հիմա էլ դրա սիրուց տոչորվիր։

Ուսումս ավարտելուց հետո ես չխնդրեցի այդ աղջկա ձեռքը, որովհետեւ եթե ընդուներ առաջարկս, հանկարծ, երջանկությունս այնքան մեծ պիտի լիներ, որ ես տակին ճխլվեի։

Սրտիս կեսը Էջմիածին թողած՝ Վան գնացի։

Այնտեղ էլ ամուսնացա ոչ այնպես, ինչպես ճաշարան մտնողը իր ճաշակին համեմատ կերակուր է պատվիրում։ Ո՛չ, ես նստա սեղանին եւ ասացի՝ «պատրաստի ինչ ունես՝ բեր», որովհետեւ ոչ մի ճաշարանապետ չէր կարողանա իմ ուզած Սաթենիկը պատրաստել։ Իսկ երբ Սաթենիկ չկա, ոչինչ չկա…

Եկավ 1915 թվականը. պատահեց հայոց պատմության մեջ չպատահած մի դեպք։ *Թուրք կառավարությունը, որ սովորություն ուներ տարին մեկ անգամ քաղհանել հայությունը, սեյրակացնել, այս անգամ տրակտորը լծեց ու ողջ Տաճկահայաստանը հերկեց այնպես, որ հայի հոտը կտրվի Երկրից*, ու մենք գաղթեցինք։

«Գաղթը» անծամբ չճաշակողի համար հասարակ անուն է եւ գրվում է փոքրատառով, իսկ անծամբ ճաշակողի համար հատուկ անուն է եւ աշխարհում միակը։

Այն ժամանակ, երբ մի թեթեւ բեռ շալակդ առած, ծերունի մորդ ձեռները բռնած դուրս ես գալիս քո հայրենի տնից եւ մի վերջին անգամ ետ ես նայում կտրելու համար այն անթիվ անըմբռնելի թելերը, որ կապում են քեզ հայրենի տանը, քո պատերին, պապի պապերին, այն ամբողջ քաղցր հուշերին, որոնցով ապրում էիր մինչեւ այդ վայրկյանը։ Դու, երբ մի խորունկ ախ ես քաշում ու *երես դարձնում այդ բոլորից, այն ժամանակ ես զգում միայն, թե ինչ բան է գաղթը…*

Լավ վատ՝ ճաշակեցինք մեր առջեւ դրված այս պատառն էլ, վերջապես եկանք Կովկաս։ Բայց այստեղ էլ հայի արյան հոտն առած թուրքը չուզեց հանգիստ տալ իր հազիվ ճողոպրած զոհերին եւ իր ոտը Բարդողյան լեռնաշղթայից այս կողմ պարզեց եւ շարունակեց արյունառությունը, մինչեւ բոլշեւիկները Հայաստան մտան եւ մնացած հայության «ազատեցին» թուրքի ճանկերից։

Մեզ պարգեւած ազատության մասին մի պարզ գաղափար տալու համար ասեմ, որ *հետագայում, երբ 21 թականին հայերը ապստամբեցին իրենց «ազատարարների» դեմ, պարտված հայությունը նորից Թուրքիա էր փախչում՝ տաճկական սուրը գերադասելով բոլշեւիկյան կացնից։*

*Բոլշեւիկյան Հայաստանը մի կատարյալ սառցատուն էր, որտեղ հայության ուղեղը սառեց իր գանգում բնավ չմտածելու համար, արյունը սառեց բազուկներում բնավ չաշխատելու համար։*

Ու այսպես քառասուներեք տարի։

Ձեզ եմ հարցնում. - Ի՞նչ «գիտակցություն» կարող եմ ունենալ ես հիմա այսպիսի «կեցություն» ունենալուց հետո»՝ (ընդգծ. մերն են - Ս. Մ.)։

Չի կարելի չնկատել, որ այս առանձնահատուկ սրված, ընդգծված գրեթե գրոտեսկային պատկերների հիմքում բուն իրականությունն է՝ իր ողբերգական կողմերով ու թերություններով։ Բայց իրականությունն ունեցել է նաեւ դրական կողմեր, որոնց չի անդրադարձել Լեռ Կամսարը։ Իհարկե, սրումն ու միակողմանի չափազանցումն առկա են լեռկամսարյան պատկերներում։ Դրանք երբեմն նույնիսկ գերազանցում են բնականության հավանականության սահմանները՝ վերածվելով գրոտեսկի։ Առանց վատը տեսնելու այդ առանձնահատուկ ծիրքի, առանց սրման ու չափազանցման՝ վատը, տգեղը, այլանդակը ցայտուն չէին դառնա, եւ նրանց նկատմամբ չէր ձեւավորվի հասարակական անհանդուրժողականություն։

*Շարունակությունը՝ էջ 5*



*Տունը, որտեղ ապրել է Լեռ Կամսարը*



*Սկիզբը՝ էջ 3*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ
## (1166-1173)

Սակայն հայոց հայրապետը բարեմտորեն հակված էր կարծելու, որ քրիստոնյաների միավորումը հնարավոր է այդ սկզբունքով, ուստի նրա նամակի մեջ, հակառակ որոշ ուսումնասիրողների, չի կարելի ո՛չ հունադավանություն եւ ո՛չ էլ հռոմեադավանություն տեսնել։ Անշուշտ, նրա կարծիքով՝ հայերը կարող էին որոշ փոխադարձ զիջումների գնալ, բայց ոչ թե համաձայնել, որ Հայոց Եկեղեցին կլանվի բյուզանդականի կողմից։ Միայն այսպես կարելի է ընկալել Շնորհալու նամակը։

Մ. Օրմանյանն իրավացիորեն քննության է առնում մի խնդիր եւս, թե ըստ հռոմեադավան հայերի՝ Ներսեսը նպաստավոր կարծիք է հայտնել իրենց հարցում՝ բարձրացնելով հռոմեադավան եկեղեցին մյուս եկեղեցիներից։ Իրականում հայոց կաթողիկոսը լատինների հետ գործնականում չի շփվել, չի բանակցել, չի թղթակցել եւ առնչություններ չի ունեցել։ Գրիգորի ժամանակ Հռոմ գնացած պատվիրակության անդամ լինելը ոչինչ չի ասում, քանի որ այդ ձեռնարկը եւ ոչ մի հետեւանք չունեցավ։ Ինչ վերաբերում է նրա հայրապետության տարիներին, ապա նա Հռոմի հետ երբեւիցե հարաբերություններ չի ունեցել։ Իսկ ինչ վերաբերում է բյուզանդականին, ապա նրանք Ներսեսի օրոք, այսինքն՝ Փոտիոսի եւ Կերուլարիոսի պատրիարքությունից շատ անց հիմնավորապես խզել էին իրենց կապերը Հռոմի հետ, ուստի դժվար է հասկանալ, թե ինչպես բյուզանդացիների հետ հարաբերությունների մեջ մտնելը կարող է հօգուտ հռոմեադավանության քայլ համարվել։ Թերեւս աներկբայորեն ճիշտ է Մ. Օրմանյանի բացատրությունը, թե հռոմեադավան ռայերն ընկել են Կղեմես Գալանոսի ծուղակը, երբ վերջինս հույների օգտագործած «հռոմեական» արտահայտությունը փոխանակ «հոռոմական», այսինքն՝ «բյուզանդական» ընկալելու, թարգմանում է «հռոմեական»։ Ներսեսի օրոք ծանր էր եւ խաչակրաց իշխանությունների վիճակը, երկրորդ խաչակրաց արշավանքն առանձին արդյունք չէր տվել, եւ ընդհակառակը՝ այլազգիների իշխանությունը հետզհետե ընդարձակվել ու ուժեղացել էր։ Ինքը՝ հայոց հայրապետը, Հռոմկլայում Հալեպի սուլթանների ենթակայության ու որոշ իմաստով հովանավորության ներքո էր, եւ Ներսես Շնորհալին գործում էր՝ ելնելով ստեղծված կացությունից, իսկ բյուզանդացիները հենվում էին միայն Մանվել կայսեր ուժի եւ ազդեցության վրա։

*Շարունակելի*

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

### Միջին բրոնզի դարի՝ Ք. ա. 25-16 դդ. արվեստը

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ 2006-ի թիվ 15-19*

Սեւան-արցախյան մշակույթի ամենատարածված զարդանախշը միմյանց հպված, թեք գծերով լցված շեղանկյուններից բաղկացած ծաղկաշղթան է, իսկ թռեղքյան մշակույթում՝ սուր ծայրով գած ուղղված, միմյանց հպված եռանկյունիների շղթան՝ լցված ուղղահայաց ալիքաձեւ գծերով (ջրի ֆորմուլա): Եռանկյունիների սուր ծայրերը հաճախ օղակված են շրջանակներով, իսկ ազատ տարածքներում պատկերված են ջրային թռչուններ, ճանկախաչեր (սվաստիկա) եւ այլ երկրաչափական նշաններ:

Բոլոր մշակույթներում երկրաչափական զարդերը կրում են որոշակի իմաստային ծանրաբեռնվածություն, որոնք ունեն ծիսահմայական, դիցաբանական եւ կոսմոգոնիկ իմաստ: Երկրաչափական նշաններից կազմված կոմպոզիցիաներն ամենից շատ նկարագրում են տիեզերքի հորիզոնական եւ ուղղահայաց կառուցվածքը, արականի եւ իգականի փոխառնչությունները, կյանքի, մահվան ու վերածննդի գաղափարը եւ այլն: Խեցեգործության առանձին սյուժեներ վերարտադրում են զուտ հնդեւրոպական դիցաբանության բնորոշ թեմաներ (Գետաշենի հիդրիա, Արուճի սափոր եւ այլն):

Գեղարվեստական բարձրարժեք նմուշներ են նաեւ սեւ փայլեցված, ռելիեֆ գոտիներով եւ կետաշար զարդանախշերով անոթները, որոնք գունազարդ խեցեղենի հետ միասին կազմել են սեղանի տոնական սպասքը:

Հայկական լեռնաշխարհի՝ միջին բրոնզի դարի հուշարձաններից հայտնաբերված թանկարժեք մետաղներից պատրաստված սպասքն իր գեղագիտական արժանիքներով համարժեք է այդ ժամանակաշրջանի Հին Արեւելքի առավել զարգացած քաղաքակրթությունների արվեստի գործերին: Դրանք պատրաստելիս օգտագործել են հետեւյալ տեխնիկական հնարքները. ձուլում, կոփում, կաղապարում, գլանում, զոդում, դրվագում, փորագրում, ցանցազարդում (ֆիլիգրան), վերադիր



հատիկազարդում եւ այլն: Հնագույն տորեւտիկայի՝ մեզ հասած մեծաքանակ նմուշներից թերեւս կարելի է առանձնացնել չորսը. Վանաձորի՝ գնդաձեւ իրանով եւ օղակաձեւ նստուկով ոսկյա գավաթը, որի վրա հերալդիկ դիրքով պատկերված են երեք զույգ ռելիեֆ առյուծներ՝ վեր տնկած պոչերով եւ սարսափազդու բացված երախներով:

Թռեղքի 17-րդ դամբանաբլուրից հայտնաբերված կրկնակի պատերով ոսկյա գավաթի մակերեսին ագուցված են կիսաթանկարժեք քարեր՝ վարդագույն սադիրն եւ կապույտ փիրուզ, որոնք դեղին ոսկյա ֆոնի վրա նրբաճաշակ գունախաղ են ստեղծում: Գավաթի իրանը զարդարում են լայն պարույրները՝ կազմված մակերեսին զոդած ոսկեթելերից, վերադիր հատիկներից եւ նրանց մեջ ագուցված կիսաթանկարժեք քարերից: Բացառիկ գեղեցիկ այս գավաթը հիացնում է կատարման տեխնիկայով, ձեւով եւ զարդարանքի նրբաճաշակ շքեղությամբ:

Պատմաէպիկական, դիցաբանական եւ գեղագիտական բացառիկ արժեք են ներկայացնում Թռեղքի (Կորուկթաշ) եւ Քարաշամբի արծաթյա գավաթները, որոնց վրա դրվագված սյուժեները մեզ են ներկայացնում միջին բրոնզի դարի կյանքի կենդանի պատառիկներ՝ համեմված դիցաբանական պատումներով: Ներքին լարվածությամբ հագեցած սյուժեները պատկերում են Ք. ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագլխում ապրած մարդկանց կենցաղը, ծեսերը, բարոյական նորմերը, աշխարհընկալումները, ռազմական արվեստը, բնակչության մարդաբանական տիպը, հագուստը, զենքերը, երաժշտական գործիքները, կահույքը՝ արձանագրված արծաթե թիթեղի վրա: Եթե Կորուկթաշի գավաթի պատկերագրությունը զուտ ծիսական է, որը մեզ է ներկայացնում հնդեւրոպական դիցարանի ամենատարածված թեմաներից մեկը՝ կապված կյանքի-մահվան եւ վերածննդի գաղափարի հետ, ապա Քարաշամբի գավաթի վրա արտահայտված է պատմական հենքի վրա հյուսված մի ողջ էպոս: Առանձնապես ապշեցուցիչ է Քարաշամբի գավաթը, որի վրա դրվագված վեց շարք հորիզոնական գոտիներին պատկերված է դրամատիկական զարգացում ապրող դեպքերի հաջորդական ընթացքը. վարազի որս, որը այլաբանորեն կանխորոշում է իրադարձությունների զարգացման ընթացքը: Հաջորդ ծոփորի վրա քանդակված է պատերազմին նախորդող արքայական խրախճանքը եւ աստվածների գութը շարժելու համար եղջերուի զոհաբերությունը, ապա ռազմիկների երթը, ճակատամարտը «նիզակակիրների» եւ «սրակիրների» միջեւ, գերիների գլխատումը եւ նրանց հոգիների վերափոխումը գայլապոչ էակների: Այստեղ պատկերների լեզվով մեզ հետ խոսում է հնդեւրոպական դիցաբանության կանոններով զարգացող աշխարհի հնագույն ասքերից մեկը: Մարդիկ պատկերված են կա՛մ պրոֆիլ, կա՛մ կիսապրոֆիլ՝ գոտկատեղից ցած պրոֆիլ, գոտկատեղից վեր՝ անֆաս: Եթե Կորուկթաշի պատկերներին բնորոշ է հանդիսավոր ստատիկ դիրքը, ապա Քարաշամբի սյուժեն աչքի է ընկնում դինամիզմով եւ ներքին վիթխարի լարվածությամբ: Առանձնապես տպավորիչ է երկու առաջնորդների մենամարտի տեսարանը. նիզակակիր հերոսի հարվածից «սրակիրների» առաջնորդն ընկել է ծնկի վրա, երեսը ծածկող հոծ սաղավարտը դուրս է թռել՝ մերկացնելով դեմքը: Մի ակնթարթ եւս, եւ նա կտապալվի գետնին: Կարծես բացակայում է լոկ սաղավարտին հարվածած նիզակի զնգոցը՝ մենամարտի կենդանի պատկերն ամբողջացնելու համար: Հնագույն տորեւտիկայի այս նմուշները թե՛ պատկերագրությամբ եւ թե՛ սյուժետային հորինվածքով ամենաասերտ աղերսն են գտնում խեթական արվեստում եւ դիցաբանության գրավոր հուշարձաններում:

Մեծ բազմազանություն են կազմում միջին բրոնզի դարի զարդերն ու պերճանքի առարկաները՝ շքասեղանները, ապարանջանները, մանյակները, ուլունքները, ճարմանդները, հայելիները եւ այլ իրեր՝ պատրաստված ոսկուց, արծաթից, բրոնզից, կիսաթանկարժեք քարերից (սարդիոն, հասպիս, գիշեր, օնիքս, վանակատ եւ այլն), բազմագույն ապակուց եւ հախճապակուց: Դրանք իրենց կատարման տեխնիկայով եւ արտահայտչականությամբ չեն զիջում վերոհիշյալ տորեւտիկայի հիասքանչ գլուխգործոցներին:

Արվեստի ուրույն բնագավառ են ներկայացնում դամբարաններից հայտնաբերված որմնանկարները (Վերին Նավեր, Լոռի բերդ):

*Շարունակելի*

**Հակոբ ՍԻՄՈՆՅԱՆ**
***Պատմական գիտ. թեկնածու, արվեստաբանության դոցենտ***

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ
# ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ

*Սկիզբը՝ էջ 4*

Լեռ Կամսարն այն երգիծաբանն է, որի գլխավոր սկզբունքը տգեղությունները տեսնելն էր եւ սափրիչի մկրատով դեմքի ավելորդ մազերը կտրելն ու դեմքը գեղեցկացնելը: Նրա դրականի իդեալը շրջված է. ինչն ինքը դատապարտում է՝ դրա հակառակն է ուզում հաստատել կյանքում: Իր այս սկզբունքով ու ստեղծագործական կենսագրությամբ նա ավելի մոտ է Պարոնյանին, քան Օտյանին, որը տգեղի, այլանդակի կողքին տեսնում էր նաեւ դրականն ու գնահատելին:

Լեռ Կամսարի քաղաքական երգիծանքն, այո՛, ունի որոշակի միակողմանի սրություն: Նա գերազանցապես իրականության թերություններն է տեսնում. դա է նրա պաշտոնն ու կոչումը, տաղանդի ուղղությունն ու գեղարվեստական մտածողության յուրահատկությունը: Լավ կողմեր, ինչ խոսք, կային սոցիալիստական իրականության մեջ, եւ դա երգիծաբանն ինքն էլ չի ժխտում: Սակայն նա այս առիթով 1957 թ. նոյեմբերի 30-ի գրության մեջ տալիս է մի հետաքրքրական բացատրություն.

«Այսօր մի պատասխանատու կոմունիստ ինձ կանչեց եւ ու ասաց.



**Լեռ Կամսարի տունը Երեւանում**

*- Ինչո՞ւ դու միայն մեր բացերն ես գրի առնում. մի՞թե մենք մեր օրում մի լավ բան չենք արել:*

Ասացի.

*- Դուք շատ լավ բաներ եք արել, եւ ձեր մահվանն եմ սպասում դրանք հրապարակելու համար,* որովհետեւ ընդունված չէ կենդանությանը մեկին գովել: Իմ վարմունքը զուտ բոլշեւիկյան է, այն, ինչ որդեգրել եք դուք ձեր պրակտիկայում: Դուք Եղիշե Չարենցին ծեծի տակ մեռցրիք բանտում, ու տեսեք, թե հիմա ի՜նչ մեծ շուքով եք անմահացնում նրա հիշատակը, հրատարակելով նրան, արձան կանգնեցնելով նրա պատվին նրա անվան դպրոցի բակում եւ սա երկու ամիս է ինչ թերթ բաց անես՝ «Չարենց»-ի կիանդիպես, բոլոր բարձրախոսներն ու ցածրախոսները նրա փառքն են երգում: Համեցե՛ք,- ասացի,- *դուք մեռեք՝ ես սրանից ավելին փառաբանեմ ձեզ: Իսկ եթե թույլ տաք ծեծի տակ մեռցնել ձեզ՝ այն ժամանակ, քանի բերանումս շունչ ունեմ, պիտի գովերգեմ ձեզ»* (նույն տեղում, էջ 275, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Եվ սրա կողքին կա նաեւ շատ հետաքրքիր ինքնադատապարտում. ինչ հանդգնությամբ ու սրությամբ նա ծաղրել է ուրիշների կամ հասարակարգի արատները, նույնպիսի խստությամբ էլ իր սեփական թերություններն է ծաղրել՝ գնահատելով սոցիալիզմի առավելությունները. պարզապես նա առաջնային ու հրատապ է համարել հասարակական երեւույթների պատկերումը, այն թերությունների վերացումը, որից կշահեր մարդկությունը: 1958-ի փետրվարի 5-ի օրագրության մեջ կարդում ենք. «Այսօր ես ժամանակը հասած եմ համարում մի փոքր էլ քննադատելու ինքս ինձ:

Ամեն տեսակի անհաճո բան, որ պատահում է ինձ՝ ես սովոր եմ դրա պատճառը համարել բոլշեւիկյան իշխանությանը: Չեմ ասում չէ, շատ բաներում նա մեղավոր է, բայց կան բաներ էլ, որ խեղճը բոլորովին մեղք չունի:

Ճիշտ է, որ ամբողջ քսան տարի իմ գրիչը անգործության դատապարտեց՝ ինձ աքսորի ուղարկելով բեւեռ...

Կառավարությունն ի՜նչ մեղավոր է, որ ես այսօր յոթանասուն տարեկան եմ եւ շուտով պիտի մեռնեմ:

Լենկթեմուրի, Չինգիզխանի, ցարի ու սուլթանների երջանիկ տարիներին մի՞թե մարդիկ չէին ծերանում ու մեռնում:

Կամ ներկայիս արտասահմանյան ազատ երկրներում մի՞թե մարդիկ չեն ծերանում ու մեռնում:

Մի՞թե կարելի է ատելության մեջ այդքան կուրանալ:

Չի կարելի:

... Այո՛, պիտի կրկնեմ. շատ հեռուն եմ գնում ես սովետական կարգերի վերաբերմամբ ունեցած իմ ատելության մեջ:

Կանանց ասպարեզում իմ անձնական անհաջողությունների պատճառն էլ քիչ է մնում սովետական կառավարությանը վերագրեմ:

... Իբր թե ցարի ժամանակ կանայք չորս կողմիցս վրաս թափվելիս լինեին:

Սովետական կառավարությո՛ւն, ներողություն, քեզ չեմ մեղադրում» (**Լեռ Կամսար**, Կարմիր օրեր, էջ 300-301):

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

Կից սենյակում

# Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանց է Երկնքի արքայությունը

## Մեր հյուրն է Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Գրիգոր քահանա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

**- Անապատում փորձվելուց եւ բազում հրաշագործություններ կատարելուց հետո մեր Տեր Հիսուս Քրիստոսը, տեսնելով Իր հրաշագործությունների մեծ համբավից խմբված բազմությունը, բարձրացավ լեռը՝ Իր հետ տանելով Իր աշակերտներին, եւ սկսեց ուսուցանել այն, ինչ Եկեղեցու հայրերն անվանել են Ավետարան Ավետարանի մեջ: Հիսուս Քրիստոսի այս խորհրդավոր պատգամախոսությունը դարեր շարունակ մեկնաբանել են եկեղեցու հայրերն ու վարդապետները՝ փորձելով թափանցել «Լերան քարոզի» եւ հատկապես երանիների խորքերը: Փորձենք հասկանալ առաջին երանիի խորհուրդը: Տե՛ր հայր, ի՞նչ է նշանակում «Երանի՜ հոգով աղքատներին», ովքեր են հոգով աղքատները:**

- «Լերան քարոզը», իիրավի, Ավետարան է Ավետարանի մեջ, ուր ամփոփված է մեր Տիրոջ ողջ վարդապետությունը՝ շատ հակիրճ, խտացված կերպով: «Լերան քարոզը» սկսվում է ինը երանիներով, որոնք ներկայացնում են քարոզի նպատակը, այն է՝ երանության հասնել, իսկ երանությունը երջանկության ծայրագույն վիճակն է: Յուրաքանչյուր երանի քայլ առ քայլ մոտեցնում է այդ երանական, կատարյալ վիճակին, ինչպես եւ Տերն է պատգամում. «Կատարյալ եղեք դուք, ինչպես եւ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48): Որոշակի հոգեւոր պատրաստվածություն չունեցող մարդիկ այս երանին սխալ են ընկալում՝ կարծելով, թե Հիսուս խոսում է նյութական ստացվածքի մասին: Մինչդեռ հոգով աղքատություն նշանակում է ինքնախոնարհեցում, օտարացում, հրաժարում, հեռացում մեղքից, աշխարհից, մեղանչական ընթացքից եւ դարձ առ Աստված: Մեծագույն հոգով աղքատ է սուրբ Գրիգոր Նարեկացին: Նա ուներ հոգեւոր գանձեր, սակայն իրեն հոգեւոր աղքատ էր համարում: Այդպես եւ մյուս սուրբ հայրերը: Միայն հոգով աղքատը կարող է Աստծուց ողորմություն, շնորհ գտնել, քանի որ իրեն համեմատելով Արարչի սրբության, արդարության, ճշմարտության, կատարյալի հետ՝ իրեն ունայն է տեսնում: Հիշենք Իսրայելի մեծ թագավոր Դավթին, որն ասում է. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, քանզի աղքատ եւ տնանկ եմ ես» (հմմտ. Սղմ. ԼԹ 18): Մի՞թե նա աղքատ եւ տնանկ էր: Մինչդեռ նա հոգեւոր աղքատության, տնանկության մասին է խոսում: Նա հզորագույն եւ մեծագույն թագավոր էր, աստվածային շնորհներով լուսավորված մի մարգարե, բայց իրեն աղքատ ու տնանկ էր համարում՝ կարոտ աստվածային ողորմության: Սա է ամենակարեւորը, թե մեզ ինչպիսին ենք համարում: Ճանաչել ճշմարտությունը, Աստծուն, հասկանալ, որ Աստծո համեմատ ամեն ինչ ունայն է. սա է հոգով աղքատությունը: Այս երանիի խոստումը Երկնքի արքայությունը ժառանգելն է: Փրկագործության նպատակն էլ հենց աստվածտեսությունն է, Երկնքի արքայության ժառանգումը, Աստծո հետ հավիտենական բնակությունը:

**- Եկեղեցու հայրերն ինը երանիները հաճախ համեմատում են հրեշտակների ինը դասերի հետ. ի՞նչ կասեք այս մասին:**

- Հրեշտակները մեզ միշտ հիշեցնում են Երկնքի արքայությունը, Աստծուն ավելի մերձ գտնվելը: Ըստ Եկեղեցու հայրերի՝ հրեշտակների դասերը նույն մերձավորության վրա չեն գտնվում Արարչից: Կան հրեշտակների դասեր, որոնք անմիջականորեն սպասավորում են Տիրոջը, իսկ հրեշտակների ստորին դասերը սպասավորում են մարդկանց եւ շատ մոտ չեն Արարչին: Սակայն սա չի նշանակում, որ գոյություն ունեն հրեշտակների բարձր եւ ցածր աստիճաններ: Ուստի ինչպես հրեշտակների դասերը քայլ առ քայլ մոտենում են Աստծուն, նմանապես եւ երանիները մարդուն քայլ առ քայլ բարձրացնում են առ Աստված:

**- Տե՛ր հայր, մեզանում տարածում գտած «հոգով հարուստ» արտահայտությունն ի՞նչ առնչություն ունի հոգու աղքատության հետ:**

- Յուրաքանչյուր մարդ պետք է իր ներսում ամբարված հոգեւոր գանձեր ունենա, գիտելիքի պաշար, բայց սա մարդուն չպետք է դարձնի հպարտ, ինքնահավան: Ստեփանոս Սյունեցին իր երանիների մասին մեկնության մեջ ասում է, որ սատանան ունայն է, որովհետեւ արարված էր, բայց ինքն իրեն բարձրացրեց եւ ընկավ, իսկ Աստված, որ ամեն ինչի Տերն է, Ինքն Իրեն խոնարհեցնելով, մեզ բարձրացրեց երկինք: Մեծագույն հոգով աղքատը մեր Տեր Հիսուս Քրիստոսն էր: Յուրաքանչյուր ոք գիտությամբ, հոգեւոր գանձերով լցվելու անհագ ծարավ պետք է ունենա: Սա է հոգով հարուստ լինելը, սակայն դա չպետք է լինի հպարտության պատճառ: Իմ խորին համոզմամբ՝ հարստություն եւ աղքատություն հասկացություններն ունեցվածքի հետ կապ չունեն: Ս. Հովհ. Ոսկեբերանն ասում է, որ աշխարհի ամենահարուստ մարդը նա է, ով հաղթահարել է հարստահարության մոլուցքը: Քանի դեռ մարդը կուտակելու անհագ փափագ ունի, հարուստ չէ, այլ՝ աղքատ: Իսկ այն աղքատը, որը փափագ չունի կուտակելու, աղքատ չէ: Սա արդեն արծաթասիրություն կոչվող չարիքն է, որը բոլոր մեղքերի արմատն է եւ պատճառը՝ Հուդայի անկման:

**- Ո՞րն է դեպի հոգեւոր աղքատություն տանող ճանապարհը, ինչպե՞ս արժանի լինել այս երանիին:**

- Այս երանիին արժանանալու համար պետք է անցնենք մյուս բոլոր երանիներով, քանի որ յուրաքանչյուր երանի քայլ է դեպի հոգեւոր աղքատություն, դեպի ինքնախոնարհեցում, դեպի իրական զղջում եւ ապաշխարություն:

**- Գիտենք, որ հեզությունը մեծագույն առաքինություն է, եւ երանիներից մեկն էլ խոստանում է, որ հեզերը երկիրը պիտի ժառանգեն: Ընդհանրապես հոգեւոր աղքատ եւ հեզ հասկացությունների միջեւ կա՞ ընդհանրություն:**

- Արդեն ասացինք, որ հոգով աղքատությունը կամավոր խոնարհեցում է, իսկ հեզությունը Եկեղեցու հայրերը կապում են մարդու բնության հետ: Օրինակ՝ Մովսեսը՝ Իսրայելի մեծագույն մարգարեն, առաջնորդը, հեզ մարդ էր, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը: Հիշենք, թե ինչպես Մովսեսի աները՝ Յոթորը, որը քուրմ էր, խորհուրդ տվեց նրան ժողովրդի միջից ընտրել կարող մարդկանց ու նրանց դատավորներ կարգել, ովքեր կլինեին նրա օգնականները՝ պատրաստ ժողովրդին դատելու (տե՛ս Ելք ԺԸ 13-27): Եվ Մովսեսը, ում հետ Աստված էր խոսում, ում ձեռքով Աստված ծովն էր ճեղքել, երբեք չմեծամտացավ, այլ խոնարհությամբ եւ հեզությամբ ընդունեց Յոթորի խրատը:



**- Կարո՞ղ ենք ասել, որ նա, ով հոգով աղքատ է, ունի մեծագույն հարստություն, այն, ինչ ժառանգելու է՝ Երկնքի արքայությունը:**

- Իհարկե, միայն հոգով աղքատները կարող են ժառանգել ճշմարիտ, անանց հարստությունը, այն, ինչի համար Աստված արարեց մարդուն, իջավ երկնքից, խաչը բարձրացավ, գերեզման մտավ եւ հարություն առավ՝ մեզ համար բացելով Երկնքի արքայություն տանող ճանապարհը:

*Հյուրընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

**Նիկոլայ ԲԵՐԴՅԱԵՎ**

# ՄԱՀ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 17*

Չի կարելի մահն ընկալել լոկ որպես կյանքի վերջին ակնթարթ, որից անդին այլեւս չգոյությունն է կամ էլ գերեզմանային գոյությունը: Մահը ողջ կյանքի վրա տարածում ունեցող երեւույթ է. կյանքը լեցուն է մահով ու մահացությամբ: Կյանքն ինքնին անընդմեջ մահացություն է, ամեն բանի վերջը, հավիտենության մշտագոյ դատը ժամանակի վրա: Կյանքը մշտական պայքար է մահվան հետ, եւ մասնակի մահացություն՝ մարդկային մարմնի ու հոգու: Մեր կյանքում առկա մահը ծնունդ է առնում լրությունը ժամանակի եւ տարածության մեջ ամփոփելու անհնարինությունից: Մահաբեր են ժամանակն ու տարածությունը. նրանք ծնում են ճեղքվածքներ, որոնք մահվան մասնակի ապրումներ են: Երբ ժամանակի մեջ մահանում ու անհետանում են մարդկային զգացողությունները, ապա դա արդեն մահվան ապրում է: Երբ տարածության մեջ տեղի է ունենում բաժանում մարդուց, տնից, քաղաքից, այգուց, կենդանիներից, որն ուղեկցվում է այնպիսի մի զգացումով, թե կարող է պատահել, որ դրանք այլեւս չտեսնես, արդեն մահվան ապրում է: Ամեն մի բաժանման թախիծ, ժամանակի ու տարածության մեջ ամեն մի խզում մահվան թախիծ է: Ես հիշում եմ այդ թախծի տանջալից փորձառությունը, որ ունենում էի ամեն մի բաժանման ժամանակ՝ դեռեւս մանկությանս տարիներին: Դա այնպիսի ընդգրկուն բնույթ ուներ, որ մահվան թախիծ էի ապրում նաեւ նրանից, որ այլեւս երբեք չէի տեսնելու ինձ անծանոթ ու օտար այն մարդու դեմքը, այլեւս չէի տեսնելու այն քաղաքները, որոնցով պատահականորեն անցել էի, բնակարանները, ուր մի քանի օրով կանգ էի առել, չէի տեսնելու այն ծառը, հանկարծակի ինձ հանդիպած այն շանը եւ այլն, եւ այլն: Դա իհարկե հենց կյանքում առկա մահվան փորձառությունն է: Լրությունը չընդգրկող, խզումի ու բաժանման տանող ժամանակի ու տարածության մեջ մշտապես հաղթանակում է մահը: Դա խոսում է այն մասին, որ կյանքի իմաստն ընկած է հավիտենության եւ լրության մեջ, եւ այն կյանքը, որում իմաստն է թագավորում, չի ճանաչելու խզում ու բաժանում, չի ճանաչելու մարդկային զգացողությունների ու մտքերի փտում ու մահացություն: Մահն այցելում է մեզ ոչ միայն այն ժամանակ, երբ ինքներս ենք մահանում, այլեւ՝ երբ մահանում են մեր մերձավորները: Մենք կյանքում, չնայած ոչ վերջնական, ունենք մահվան փորձառությունը: Բայց մենք չենք կարողանում հաշտվել մահվան հետ եւ այն էլ ոչ միայն մարդկանց, այլեւ կենդանիների, ծառերի, ծաղիկների, իրերի, տների... Կյանքի բուն էությունը հենց համայն գոյության հավիտենությանը ձգտելն է: Եվ դրանով իսկ հավիտենությունը ձեռք է բերվում միայն մահվան միջով անցնելով: Մահն այս աշխարհում բոլոր ապրողների բաժինն է: Եվ որքան բարդ է կյանքը, որքան բարձր է կյանքի մակարդակը, այնքան ավելի շուտ է վրա հասնում մահը: Լեռներն ավելի երկար են ապրում, քան մարդիկ. նրանց կյանքն ավելի քիչ է բարդ եւ իր որակով՝ ավելի ցածր: Մոմբլանն առավել անմահ է թվում, քան սուրբն ու հանճարը. իրերն ավելի դիմացկուն են, քան կենդանի արարածները:



Դրական նշանակություն ունի մահը: Եվ սակայն մահն ամենասարսափելի եւ միակ չարիքն է: Ուզածդ չար գործ կարող է հանգեցնել մահվան. սպանությունը, ատելությունը, չարակամությունը, անառակությունը, նախանձը, վրեժխնդրությունը մահ են եւ մահվան սերմանում: Բոլոր մոլուցքների խորքում ընկած է մահը: Ինքնասիրությունը, շահամոլությունը, պատվախնդրությունը հենց իրենց արդյունքում մահաբեր են: Ուրիշ ոչ մի իրական չարիք, մահից ու սպանությունից զատ, գոյություն չունի: Մահը մեղքի դաժան արդյունքն է: Անմեղսունակ կյանքը կլիներ անմահ, մշտնջենական: Մահը հավիտենության ժխտումն է, եւ դրանում է գոյաբանության դաժանությունը, նրա բշնամանքը գոյի հանդեպ, նրա՝ արարվածների չգոյությանը վերադարձնելու փորձերը: Մահն աշխարհի աստվածային արարչագործության հակառակությունն է, այն վերադարձ է սկզբնական չգոյությանը: Մահն ուզում է ազատել արարածներին՝ նրանց՝ արարչագործությանը նախորդող սկզբնական ազատությանը վերադարձնելու միջոցով: Աստծո՝ իր մասին ծրագրին ու աստվածային նախախնամությանը հակադրվող արարածը մեղքի մեջ է եւ այդտեղից ունի մի ելք՝ մահը: Մահը ժխտողական վկայությունն է Աստծո զորության եւ Աստծո իմաստի, որն ի հայտ է գալիս անիմաստության մեջ: Նույնիսկ կարելի է ասել, որ աշխարհը կիրականացներ իր անսահման (ոչ հավիտենական) կյանքի անաստված ծրագիրը, եթե չլիներ Աստված: Բայց քանի որ Աստված կա, այդ ծրագիրը չի կարող իրականանալ եւ ավարտվում է մահով: Եվ Աստծո Որդին՝ Փրկիչն ու Քավիչը, Ով կատարելապես առանց մեղքի է եւ սուրբ, պետք է ընդուներ մահը եւ դրանով սրբագործեր այն: Այստեղից է հենց բխում քրիստոնյաների երկակի վերաբերմունքը մահվան հանդեպ: Քրիստոսը մահով մահը ոտնահարեց: Եվ Նրա կամավոր մահը՝ աշխարհի չարից ծնված, բարիք է եւ գերագույն արժեք: Խաչին պատվելով՝ մենք պատվում ենք մահը, ազատարար, հաղթանակած մահը, քանզի եթե կամենում ես հարություն առնել, ապա պետք է մահանաս: Խաչվածի մահն այլակերպվում եւ դեպի կյանք է գնում, դեպի հարություն: Եվ այս աշխարհի ողջ կյանքը պետք է անցնի մահվան միջով, խաչելության միջով: Առանց դրա այն չի կարող հարություն առնել, չի կարող գնալ հավիտենություն: Մահը վերջնական չէ, եւ նրան չի պատկանում վերջին խոսքը, երբ այն ընդունվում է որպես կյանքի գաղտնածիսության (միստերիա) պարագա:

Շարունակությունը՝ էջ 8

ԻՌՇԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)

# ՓՈՔՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

«Սակայն քո դեմ այն ունեմ, որ դու թողել ես քո առաջին սերը»: *(Հայտ. Բ 4)*

Փոքր մեղքը ծխախոտի պես այնպես սովորական է դարձել մարդկային հասարակության մեջ, որ հասարակությունը նրան տրամադրում է ամեն տեսակ հարմարություններ: Որտեղ ասես հնարավոր չէ ծխախոտ գտնել: Ամեն տեղ էլ կարելի է գտնել մոխրաման, ամեն տեղ գոյություն ունեն հատուկ սենյակներ, վագոններ, կուպեներ «ծխողների համար»: Նույնիսկ չափազանցություն չի լինի ասել, որ ամբողջ աշխարհն իրենից ներկայացնում է մի հսկայական սենյակ, ավելի ճիշտ՝ միջաստղային ոլորտներում մի հսկայական վագոն՝ «ծխողների համար»: «Ծխում են»՝ մանրորեն ու հանգիստ մեղանչում են ամենքը՝ ծերեր թե մանուկներ, հիվանդներ թե առողջներ, գիտնականներ թե հասարակ մարդիկ... Մահապատժից առաջ հանցագործին թույլ են տալիս մի գլանակ ծխել: Կարծես երկրային մթնոլորտում օդը սակավ է կամ խիստ խտացած, եւ պետք է ստեղծել մի ծխոտ, թունավոր օդ եւ շնչել, շնչել այդ թույնը, հարբել դրանով: Եվ ահա բոլորն այսպես հարբում են, այն աստիճան, որ «չծխելը» համարյա այնպիսի հազվագյուտ երեւույթ է դարձել, ինչպիսին «երբեք չստելն» է կամ «ոչ ոքի հանդեպ չբարձրամտելը»... Ծխախոտի շուկան համաշխարհային առեւտրում ամենակարեւորներից է, եւ ամեն տարի միլիոնավոր մարդիկ աշխատում են հնարավորություն տալ ուրիշ միլիոնավորների՝ թանձր ծուխ ներշնչելու եւ դրա նարկոզով պարուրելու սեփական գլուխն ու ողջ օրգանիզմը:

Արդյոք մարդու բնությա՞նն է հատուկ մանրորեն, նարկոտիկորեն մեղանչելը՝ «ծխելը»: Արդեն իսկ այսպիսի հարցը տարօրինակ է թվում: Մարդու բնությա՞նն է հատուկ բնության դեմ գնալը: Բնակա՞ն է սեփական անձը նարկոզի ենթարկելը: Հաշիշով թմրելը կառավարություններն արգելում են, իսկ ծխախոտով թմրեցմանը նպաստում: Փոքր մեղքերը մարդկային օրենքով թույլ են տրվում, դրանք մեզ բանտ չեն առաջնորդում: Բոլորը գործում են դրանք, եւ ոչ ոք չի կամենում դրանց վրա քար նետել: Ծխախոտը, ինչպես մի «փոքրիկ հաշիշ», թույլատրելի է, ինչպես փոքր սուտը, չնկատվող կեղծիքը, ինչպես մարդուն մեռցնելը սրտում կամ արգանդում: Սակայն սա չէ՛, որ ասում է Աստվածային Հայտնությունը՝ Կենդանի Աստծո կամքը: Տերը չի հաշտվում ո՛չ փոքր ստի, ո՛չ միայն մեկ սպանիչ խոսքի, ո՛չ միայն մեկ ցանկասիրական հայացքի հետ: Անօրինության փոքրիկ տերեւը նույնքան անիծյալ է Տիրոջ առաջ, որքան հանցագործության մեծ ծառը: Բազմաթիվ մանր մեղանչումները, անկասկած, շատ ավելի ծանր են մարդկային հոգու համար, քան մի քանի մեծ, միշտ հիշողության մեջ մնացող եւ միշտ ապաշխարությամբ սրբվելու ենթակա մեղքերը: Եվ սուրբը, իհարկե, նա չէ, ով մեծ գործեր է անում, այլ նա, ով իրեն պահում է նաեւ ամենափոքր հանցանքներից:

Մեծ մեղքի դեմ պայքար սկսելը եւ դրա մերձեցումն ատելն ավելի՛ դյուրին է: Հայտնի է Անտոն Մուրոմցու հետ կապված հետեւյալ պատմությունը: Նրա մոտ գալիս են երկու կին. մեկը զղջում է իր մի մեծ մեղքի համար, իսկ մյուսն ինքնագոհ վկայում, որ որեւէ մեծ մեղք չի գործել: Ճանապարհին հանդիպելով այս կանանց՝ ծերը հրամայում է առաջինին գնալ եւ մի մեծ քար բերել իր մոտ, իսկ երկրորդին՝ հավաքել ավելի շատ մանր քարեր: Մի քանի րոպե հետո կանայք վերադառնում են: Ծերն ասում է. «Հիմա այս քարերը տարեք, դրեք ճիշտ այնտեղ, որտեղից վերցրել եք»: Մեծ քարը բերած կինը հեշտությամբ գտնում է այն տեղը, որտեղից վերցրել էր քարը, իսկ մյուսն իզուր պտտվում է՝ գտնելու իր քարերի տեղերը, եւ այդպես՝ բոլոր քարերով հանդերձ, վերադառնում ծերի մոտ: Խորագետ Անտոնը բացատրում է նրանց, թե ինչ են նշանակում այդ քարերը... Երկրորդ կնոջ դեպքում դրանք այն բազմաթիվ մեղքերն էին, որոնք դարձել էին նրա համար սովորական, նա դրանք ոչինչ էր համարում եւ երբեք չէր զղջում դրանց համար: Նա չէր հիշում իր փոքր մեղքերն ու կրքերի բռնկումները, իսկ դա ցույց էր տալիս նրա հոգու տխուր վիճակը, որը նույնիսկ ապաշխարության ընդունակ չէր: Մինչդեռ առաջին կինը, ով հիշում էր իր մեղքը եւ ցավում դրա համար, իր հոգին ազատեց դրանից:

Բազմաթիվ փոքր, անարժան սովորությունները մարդու հոգու համար տիղմ են, եթե մարդ դրանք հաստատում է իր մեջ կամ ընդունել է դրանք իբրեւ «անխուսափելի» չարիք, որի դեմ «չարժե» եւ «չի կարելի» պայքարել: Ահա այստեղ էլ հոգին ընկնում է Աստծո թշնամու դարանը: «Ես սուրբ չեմ», «ես աշխարհում եմ ապրում», «ես պիտի ապրեմ, ինչպես բոլոր մարդիկ»... իրեն հանգստացնում է հավատացյալ մարդու տնքացող խիղճը: Մա՛րդ, մա՛րդ, իհա՛րկե դու սուրբ չես, իհա՛րկե «ապրում ես աշխարհում» եւ «պիտի ապրես ինչպես բոլոր մարդիկ», ուստի ծնվի՛ր, ինչպես բոլոր մարդիկ, նայի՛ր, լսի՛ր, խոսի՛ր, ինչպես նրանք, սակայն ինչո՞ւ Աստծո օրենքը խախտես, «ինչպես նրանք»: Ինչո՞ւ բարոյապես այդքան չքուրես, «ինչպես նրանք»: Մտածի՛ր այս մասին, ո՛վ մարդ:

Որքան դժվար է հոգու համար հրաժարվել սուտ, սակայն սովորական դարձած մտքից: Աստվածմերժական այս աշխարհի հոգեբանությունն այնպես ամուր է մտել ժամանակակից մարդու հոգեկան աշխարհը, որ մեղքի եւ Աստծո օրենքների դեմ մեղանչման հարցում համարյա բոլոր մարդիկ գործում են միանման՝ «ըստ շտամպի»:

Ամենատխուրն այն է, որ չարը մարդկանց ներշնչել է մեղքի պահանջները կոչել «բնության պահանջներ»: Բնության պահանջը շնչելն է, չափավոր հագնվելը, տաքանալը, օրվա մի մասը քնին հատկացնելը, բայց ո՛չ երբեք սեփական օրգանիզմը նարկոզի ենթարկելը, անիմաստ կապվելը պատրանքին, ծխին:

Բավական է՝ մարդ ազնվորեն խորհի այս հարցի շուրջ, եւ չարն ինքնիրեն դուրս կգա խղճի ջրի երեսը: Բայց բանն էլ այն է, որ ժամանակակից մարդը ժամանակ չունի մտածելու այն միակ կարեւոր հարցի շուրջ, որը վերաբերում է ոչ թե այս 60-70-ամյա կյանքին, այլ նոր ու մեծ պայմաններում մարդու անմահ գոյության հավիտենությանը: Ամբողջովին տարված սխալ հասկացվող



«գործնականությամբ»՝ ժամանակակից մարդը, խորասուզված իր գործնական-երկրային կյանքի մեջ, մտածում է, որ ինքն իսկապես «գործնական» է (պրակտիկ): Ցավալի՛ մոլորություն: Իր անխուսափելի (միշտ շատ մոտ) այսպես կոչված մահվան պահին նա իր աչքերով կտեսնի, թե որքան քիչ է իրականում ինքը գործնական եղել, երբ գործնականության հարցը կապել է իր ստամոքսի պահանջների հետ եւ բոլորովին մոռացել իր հոգու մասին:

Իսկ այժմ մարդն իսկապես «ժամանակ չունի» մտածելու իր կյանքի բարոյական տարրական օրենքների շուրջ: Եվ դժբախտ մարդն ինքն էլ է դրանից անասելի տառապում: Ինչպես մի մանուկ, որ շարունակ դիպչում է կրակին ու լալիս՝ մարդկությունը շարունակ դիպչում է մեղքի ու ցանկության կրակին եւ լալիս ու տառապում, սակայն դարձյալ ու դարձյալ դիպչում... չհասկանալով իր հոգեւոր երեխայության վիճակը, որն Ավետարանում «կուրություն» է կոչվում եւ իրոք էլ սրտի կուրություն է՝ ֆիզիկական աչքերի առկայությամբ:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Ս. Ստամբոլցյանի***

---

## Վանահայր եվմենի

# Հարցեր ինքդ քեզ

## (հատված)

*Սկիզբը՝ թիվ 19*

31. Արդյոք օգնո՞ւմ եմ երեխաներիս՝ գիտակցելու իրենց պատասխանատվությունը, եւ նրանց մոտ զարգացնո՞ւմ եմ այդ որակը, այսինքն՝ տալի՞ս եմ նրանց համապատասխան հանձնարարություններ, սովորեցնո՞ւմ եմ ունենալ ընտրության հնարավորություններ: Թե՞ երեխաներիս վարժեցնում եմ ծնողական հրահանգները տառացիորեն կատարելուն՝ նրանց զրկելով հասուն եւ պատասխանատու մարդ ձեւավորվելու հնարավորությունից:

32. Արդյոք ընդունո՞ւմ եմ երեխաներիս անձնական կյանք ունենալու իրենց իրավունքը: Կարողանո՞ւմ եմ նրանց, ըստ իրենց տարիքի, պատասխանատվություն պատգամել:

33. Արդյոք ջանո՞ւմ եմ օրինակ ծառայել երեխաներիս, որ ձգտեն նմանվել ինձ:

34. Որպես քրիստոնյա՝ արդյո՞ք իմ երեխաներին քրիստոնյաներ եմ դաստիարակում, արդյո՞ք նրանց հետ կարդում եմ Սուրբ Գիրքը, թե՞ համարում եմ, որ նրանք կմեծանան եւ ինքնուրույն կընտրեն իրենց հավատքը:

35. Արդյո՞ք իմ երեխաներին սովորեցնում եմ սիրել հայրենիքը, նրանց դաստիարակո՞ւմ եմ լինել հոգատար մարդիկ, ապագա ծնողներ, թե՞ նրանց կողմնորոշում եմ միայն այս աշխարհի արժեքներով:

Բարոյական հիմքից զուրկ սրտում չի կարող աճել պատասխանատվություն:

36. Երեխաների մասին հոգալիս ինչի՞ն եմ տալիս առաջնությունը՝ նրանց առողջությա՞նը, մտավոր զարգացմա՞նը, արտաքին տեսքի՞ն, թե՞ հոգեկան կարգավորմանը:

37. Արդյոք իմ ծնողների հետ պահպանո՞ւմ եմ որդիական կանոնավոր փոխհարաբերություններ:



Եթե չեմ պահպանում, ուրեմն մեղանչում եմ անշնորհակալության մեղքով, որն ան-
պատասխանատվության ծառի պտուղ է:

38. Արդյոք չե՞մ վախենում իմ հոգին բա-
ցել ուրիշի առջեւ: Արդյոք կարո՞ղ եմ լինել
հոգատար ու նրբազգաց իմ մերձավորի ան-
կեղծության հանդեպ, արդյոք պահպանո՞ւմ
եմ ինձ վստահված գաղտնիքը:

Ուրիշն ինձ համար ընկեր է, թե՞...

39. Որքանո՞վ է ինձ հատուկ քմահաճությունն ու պարծենկոտությունը: Որքա՞ն հաճախ եմ հասնում իմ նպատակներին՝ մերձավորներիս դեմ դավեր նյութելով:

Այդ մասին հարցրեք ձեր ամենամոտ մարդկանց, ովքեր ներկայումս ապրում են ձեզ հետ՝ նույն հարկի տակ: Եթե դուք ապրում եք մենակ, հարցրեք ձեզ մոտիկ ծանոթ մարդկանց: Միայն խնդրեք նրանց՝ այդ մասին խոսելիս լինել ազնիվ:

40. Որքանո՞վ եմ գիտակցում, որ իմ մասնակցությունն այլ մարդկանց կյանքին, նրանց ցուցաբերած օգնությունը նպաստում է իմ անձնական հոգեւոր աճին:

41. Արդյոք ես կարո՞ղ եմ մարդկանց հետ խոսել իմ զգացումների, նրանց հետ ունեցած իմ հարաբերությունների, ցանկությունների, մարդկային կարիքների, հետաքրքրությունների մասին:

Շատ դեպքերում այլ մարդկանց հետ ջերմ հարաբերություններից խուսափելը նոր հարաբերությունների պատասխանատվությունն իր վրա կրելուց խուսափելու հետեւանք է: Անպատասխանատվությունը մայրն է հոգեկան մենակության:

42. Արդյո՞ք ընդունակ եմ սիրով պատասխանելու այլ մարդկանց սիրուն:

43. Արդյո՞ք ինձ հանձնարարված գործը կատարելիս կարող եմ շարունակել երկխոսությունը՝ փոխըմբռնման հասնելու համար, նույնիսկ այն ժամանակ, երբ հանդիպում եմ խուլ լռության, անհասկացողության ու մերժման:

44. Արդյո՞ք արդարացնում եմ ինձ, երբ ակնհայտորեն հասկանում եմ, որ ճիշտ չեմ:

Ինքնարդարացումն անպատասխանատվություն ծնող որակ է: Որոշակի քաջություն է պետք, որ քեզ վրա վերցնես կատարվածի պատասխանատվությունը եւ դա բացեիբաց ընդունես:

45. Արդյոք հարգո՞ւմ եմ այլ մարդկանց հայացքներն այս կամ այն կենսական խնդիրների շուրջ, թե՞ համարում եմ, որ միայն իմն են ճշմարիտը:

Այս հարցն իրականում այն մասին է, թե ես կարո՞ղ եմ այլ մարդկանց հետ կառուցել պատասխանատու փոխհարաբերություններ, որոնք անհնար են առանց հարգելու եւ գնահատելու դիմացինի հայացքներն ու արժեքները, եթե, նույնիսկ, դրանք չեն համընկնում իմի հետ:

46. Արդյոք ուշադրության արժանացնո՞ւմ եմ այլոց բարեկեցիկությունն ու շահը, երբ ընդունում կամ կյանքի եմ կոչում որեւէ որոշում:

47. Ինչպե՞ս եմ որոշակիորեն դրսեւորում իմ երախտագիտությունն այն մարդկանց՝ ուսուցիչներիս, ծնողներիս, հոգեւոր առաջնորդներիս հանդեպ, ովքեր նպաստել եւ աջակցում են իմ հոգեւոր ու անձնական աճին:

48. Արդյոք գիտակցո՞ւմ եմ իմ պատասխանատվությունը բոլոր նրանց հանդեպ, ում «սովորեցրել» եմ:

49. Ինչո՞ւ եմ երբեմն (կամ հաճախ) ուշանում:

50. Արդյոք հաճա՞խ եմ որեւէ մեկից ինչ-որ բան խնդրում:

Խնդրանքը ենթադրում է մերժման հնարավորություն, պահանջը՝ անառարկելի կատարում: Արդյոք խնդրո՞ւմ եմ: Գուցե պահանջո՞ւմ եմ: Թե՞ մարդուն դնում եմ այնպիսի իրավիճակի մեջ, որ նրա համար ուղղակի անհարմար կամ անհնար է մերժելը: Թե՞ ընդհանրապես չեմ խնդրում՝ վախենալով ուրիշներից կախման մեջ ընկնել:

51. Արդյոք մարդկանցից պահանջո՞ւմ եմ ինձ տրված խոստումները կատարել:

Բնավորության այս գիծն առավելապես հատուկ է այն մարդկանց, ովքեր պարտավորվածություն չեն զգում իրենց սեփական խոստումների հանդեպ:

52. Արդյոք կարողանո՞ւմ եմ պարզ սրտով ընդունել նվերներ: Արդյո՞ք համարում եմ, որ պարտավոր եմ պատասխան նվեր տալ:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՆՅԱՐԴԱՅԻ՞Ն, ԹԵ՞ ՀՈԳԵՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

## Ո՞րն է նյարդային հիվանդության պատճառը

«Այստեղս են հասցրել»,- բթամատով կոկորդն են ցույց տալիս գիտնականը, հասարակական գործիչը, բժիշկը, արվեստագետը, կանաչի վաճառող տատիկը...

Եթե այս պոռթկումը մարդու մոտ հաճախ է արտահայտվում, ապա, ինչպես ասում են բժիշկները, նա ունի նյարդային հիվանդություն:

«Քրիստոնյա Հայաստանի» մշտական ընթերցողը գիտի, որ հիվանդությունները մեծամասամբ մեղքի արդյունք են: Դրանք տրվում են Աստծու գիտությամբ եւ թույլտվությամբ, դրանք նպատակ ունեն մարմնական տառապանքների ու նեղությունների միջոցով զորացնել հոգին: Այնպես որ, հիվանդությունն այս տեսանկյունից դիտարկելը այն ճիշտ ախտորոշելու եւ լիովին բուժելու միակ ուղին է:

Անշուշտ, կան դեպքեր (օրինակ՝ ի ծնե կույրի բժշկումը), երբ հիվանդությունը մարդուն իր մեղքերի համար չի տրված լինում, եւ սա բացարձակապես չի վերաբերում նյարդային հիվանդություններին: Դրանք, ինչպես նշում է քրիստոնյա հոգեբան Դ. Ա. Ավդեեւն իր «Նյարդայնությունը. դրա հոգեւոր պատճառները եւ դրսեւորումները» գրքում, միայն ու միայն հոգեւոր հիմք են ունենում: «Բոլոր հիվանդություններն ունեն հոգեւոր հիմք,- ասում է նա,- թեպետ դրանք հաճախ հնարավոր չէ անմիջապես տեսնել. մինչդեռ նեւրոզը դրանցից առանձնանում է նրանով, որ հենց ինքն է հանդես գալիս որպես բարոյական չափանիշ: Նրա կապը հոգեւոր ոլորտի հետ ակնհայտ է, եւ այս ախտի հետեւանքը հոգեւոր դեգերումների ու խղճի խայթերի անվերջ շղթան է»:



**«Նյարդային հիվանդության իրական էությունը գաղտնիք է, որը միայն Աստծուն է հայտնի»,- Դ. Ա. Ավդեեւ:**

Եթե թերթենք ժամանակակից բժշկության գրքերը, կգտնենք նեւրոզի ամենատարբեր բնութագրումներ. ոմանք այն համարում են ուղեղի որոշ գործառույթների խանգարման, զանազան բարդ պայմաններից ելք չգտնելու եւ հուսահատության, ինֆորմացիայի գերհագեցման կամ, ընդհակառակը, պակասի, նույնիսկ՝ ժառանգական հիվանդության հետեւանք, ոմանք էլ՝ սիրո պակասի կամ էլ սիրելու անկարողության... Ինքը՝ ժամանակակից բժշկությունն էլ է խճճվել այս իրարամերժ բնութագրումների մեջ: Իսկ պատճառն այն է, որ ուղղակի հնարավոր չէ զուտ ֆիզիոլոգիական բացատրություն տալ մի երեւույթի, որն իրականում հոգեւոր է: «Մեղքը՝ որպես չարի արմատ, իր հետեւից բերում է նյարդային խանգարում,- ասում է հոգեթերապեւտ Դ. Ա. Ավդեեւը,- մտնելով մարդկային հոգու խորքերը՝ այն արթնացնում է կրքեր, ճնշում է կամքը, անղեկավարելի դարձնում զգացումներն ու երեւակայությունը... Նեւրոզներն արդարացիորեն կոչում են կրքերի սանձազերծված ձեւ»: Եվս մի փաստ. ներկայիս հետազոտությունների մեծ մասը հանգում է մեկ եզրակացության. նեւրոզը միանգամից չի առաջանում: Դ. Ա. Ավդեեւն էլ է նշում, որ «Այս ախտն ունի իր նախապատմությունը... Նրա առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ բոլոր նեւրոտիկները նման են միմյանց՝ իրենց մտածելակերպով. նրանք բոլորն էլ անհանդուժողական են եւ երեւույթները որակելու համար ունեն ծայրահեղացված մոտեցումներ. որեւէ բան կա՛մ լավ է, կա՛մ վատ»:

## Գրեթե բոլոր հիվանդությունների հիմքում նյարդային խանգարումներն են

Ըստ Համաշխարհային առողջապահության կազմակերպության տվյալների՝ հիվանդությունների մոտ 90%-ը նյարդային հիմք ունի: Այս «հիմքը» նախ արտահայտվում է հարատեւող անբացատրելի հոգնածությամբ, գլխացավերով, մարսողական խանգարումներով, անքնությամբ (որքան հաճախադեպ են, չէ՞, այս ախտանշանները մեր շրջապատում)... իսկ արդյունքում վերածվում է որեւէ «մարմնական հիվանդության»: Սկսում են ի հայտ գալ նոր ախտանշաններ՝ սեւեռունություն, բռնության դրսեւորման փորձեր, չարություն... Այս ամենն ուղեկցվում է ընդհանուր թուլությամբ, ֆունկցիոնալ խանգարումներով, ընդհանուր տհաճ ինքնազգացողությամբ:

Ահա մի վիճակ, որին հատուկ է հոգեւոր հանգստի կորուստը: Մարդը պահում է հստակ քննադատական վերաբերմունք, գրեթե պարծենում է իր վիճակով, սակայն ոչինչ իր հետ անել չի կարողանում: «Սա հոգու յուրահատուկ ազդակ է՝ թե ինչ-որ բան լավ չէ: Բայց սա լաց չէ մեղքերի համար, այլ անզիջ հոգու տանջանք, որով դեւերը շշնջում են, թե ամեն ինչ վատ է, ոչ մի հույս չկա»,- ասում է Դ. Ա. Ավդեեւը:

Եվ այնուամենայնիվ, ինչպե՞ս ճանաչենք նյարդային հիվանդության ախտանշանները, ինչպե՞ս որակենք մեր վիճակը, եթե այդ ախտանշանները, անկեղծ ասած, մեզ էլ են վերաբերում, եւ վերջապես, ինչպե՞ս բուժենք մեր նյարդերն ու... հոգին:

## Նյարդային հիվանդությունների տեսակները. հոգեւոր դեղատոմսեր

Նյարդաթուլագարություն (неврастения), սեւեռունություն եւ հիստերիա. սրանք են նեւրոզի տեսակները, եւ հակիրճ անդրադառնալով յուրաքանչյուրին՝ կփորձենք հաստատել, որ նյարդային բոլոր հիվանդությունները հոգեւոր կյանքի օրինազանցության հետեւանք են եւ բուժման համար կարիք ունեն հոգեւոր մոտեցման:

***Նյարդաթուլագարություն***. սա նեւրոզների ամենահաճախադեպ ձեւն է: Այն դրսեւորվում է նյարդային թուլությամբ, զայրույթի բռնկումներով, կենսական ուժերի անկմամբ՝ լիարժեք ուժասպառությամբ: Այն հեշտությամբ է ճանաչվում. նրա առկայությամբ բոլոր սոմատիկ հիվանդությունները շատ արագ են սրվում:

Հոգեւորական Ալեքսանդր Ելչանինովն այս հիվանդության հիմքը համարում է հպարտությունը: «Ամենաառաջին նյարդաթուլագարը դեւն է: Հնարավո՞ր է արդյոք նյարդաթուլագար պատկերացնել այն մարդուն, ով խոնարհ է, բարի, համբերատար»: «Երբեմն հանկարծ երեւան է գալիս ինչ-որ բարկություն, դժգոհություն՝ շրջապատողներից,- գրում է արքեպիսկոպոս Արսենին (Ժադանովսկի),- կամ էլ ուղղակի տհաճ, անտրամադիր, թախծոտ վիճակ: Ինչի՞ց է: Ակնհայտորեն, հոգումդ դեռ նախօրոք նման տրամադրության համար պատրաստ մի անկյուն կար: Բարկությունը, մարդկանցից դժգոհությունը հետեւանք են նրանց նկատմամբ նախանձի ու անբարեհաճության»:

Իսկ այս հիվանդությանը բնորոշ մյուս ախտանշանը՝ հարատեւ մարմնական թուլությունը, շատերին զրկում է աշխատելու հնարավորությունից: Հոգեբաններն ասում են, որ այսպիսի մարդիկ շուտով կորցնում են հետաքրքրությունը կյանքի նկատմամբ, մտածում են կամ փորձում են ինքնասպան լինել. նրանցից շատերն ի դեպ գործում են անքավելի այդ մեղքը:

Փաստորեն, հուսահատություն՝ բաժանում հույսի աղբյուրից եւ ներփակում սեփական անձի մեջ, բարկություն՝ մահացու մեղք, եւ նախանձ՝ չարի առաջին դրսեւորումը. սրանք են նեւրոզի այս տեսակի հիմքերը: Սիրելի բարեկամ, խորհի՛ր այս երեւույթի մասին, եւ ինքդ էլ կպատկերացնես, թե ո՛ր ճանապարհին է պետք ընտրել այս ախտից ձերբազատվելու համար:

*Շարունակելի*

***Կարմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***

---

**Նիկոլայ ԲԵՐԴՅԱԵՎ**

# ՄԱՀ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 6*

Մահվան դեմ ըմբոստությունը Աստծուն հակառակվել է նշանակում: Այնուհանդերձ, մահվան դեմ պետք է հերոսաբար պայքարել եւ պետք է հաղթել մահին՝ որպես ամենամեծ չարիքի, պետք է արմատախիլ անել մահվան խայթոցը: Քրիստոսի գործն աշխարհում առաջին հերթին մահվանը հաղթելն էր եւ հարության ու հավիտենական կյանքի պարտադրումը: Բարին ու բարիքը կյանքն է, կյանքի զորությունն ու լրությունը, կյանքի հավիտենությունը: Մահն աշխարհի մեծագույն պարադոքսն է, որը հնարավոր չէ ռացիոնալ կերպով հասկանալ: Մահը խելահեղություն է՝ առօրեական դարձած: Եվ առօրեականության գիտակցությունն էլ մթագնել է տվել պարադոքսալության զգացումն ու մահվան իռացիոնալությունը: Եվ սոցիալական առօրեականությունն էլ իր ռացիոնալիզացման վերջնական արդյունքում փորձում է մոռանալ մահվան մասին, թաքցնել մարդկանցից, թաղել աննկատ մեռնողին: Սոցիալական առօրեականության մեջ իշխում է մի ոգի, որը հակառակ է քրիստոնեական այն աղոթքին, որով խնդրում ենք, որ մեզ տրվի մահվան հիշողությունը: Այս առումով ժամանակակից քաղաքակիրթ մարդիկ հին եգիպտացիներից անհամեմատ ցածր են կանգնած: Աշխարհում մահվան պարադոքսն ունի ոչ միայն բացասական, այլեւ գեղագիտական արտահայտություն: Մահն անհեթեթություն է եւ առավելագույն անհեթեթությունը, կազմալուծումը, դիմազրկումը, կորուստը ուղածդ կերպարանքի, հաղթանակը նյութական աշխարհի ստորագույն տարրերի: Մահը նաեւ սքանչելի է, այն ազնվացնում է ամենավերջին մահկանացուին անգամ եւ նրան դնում ամենաառաջինների հետ նույն բարձունքին, հաղթում է ճղճիմ ու առօրեական անհեթեթությանը: Պահեր կան, երբ մեռածի դեմքն ավելի գեղեցիկ, ավելի ներդաշնակ է լինում, քան կենդանության օրոք: Մեռածի մոտից հեռանում, նրան արդեն շրջանցում են անհեթեթ ու չար զգացումները: Մահն այս աշխարհի ծայրագույն չարիքն է, մահը կյանքից առավել ազնվաբարո է: Մահն անցածի գեղեցկությունն ու սքանչելիությունն է՝ կապված մահվան ազնվացումի հետ: Հենց մահն է, որ մաքրում է անցյալը եւ նրա վրա դնում հավիտենության կնիք: Մահվան մեջ ոչ միայն փտում կա, այլեւ մաքրագործություն: Ոչ մի փչացվածություն, ոչ մի փտում ու նեխում չի կարող համեմատվել մահվան հետ: Միայն հավիտենությունն է հաղթում նրան: Եվ այսպես՝ սարսափելի չէ ընդունել, որ կյանքի արժեքը կապված է մահվան հետ, եւ այն բացահայտվում է միայն մահվան պարագայում: Մարդու բարոյական արժեքը դրսեւորվում է մահն ապրելու մեջ, ինչով որ լիքն է մեր կյանքը:

*Շարունակելի*

***Թարգմ.՝ Սյուզաննա ՎԱՐԴԱՆՅԱՆ***

---

**Վանահայր Եվմենի**

# Հարցեր ինքդ քեզ

*Սկիզբը՝ էջ 7*

53. Ինչո՞վ եմ զոհաբերվում մերձավորիս համար: Թե՞ ես միայն ցանկանում եւ սպասում եմ նրանից զոհաբերություններ:

54. Ո՞վ է մեղավոր, որ մինչ այժմ չեմ լուծել իմ ընտանեկան խնդիրները (չեմ վերանորոգել խոհանոցի ծորակը, չեմ ստուգել երեխաներիս տնային հանձնարարությունները, որ պատճառաբանում եմ, թե ժամանակ չունեմ կիրակի օրը նրանց հետ զբոսնելու, չեմ կարողանում «պոկվել» հեռուստացույցից):

55. Որքանո՞վ եմ փորձում ձերբազատվել իմ մեղսալից սովորույթներից:

56. Որքա՞ն հաճախ եմ առաջնորդվում «Եթե չի կարելի, բայց շատ է ցանկալի, ուրեմն՝ կարելի է» սկզբունքով:

57. Ինչպիսի՞ պատասխանատվությամբ եմ վերաբերվում իմ աշխատանքային ժամանակի կամ էլ այն ժամանակի հանդեպ, որ հատկացված է ապաշխարությանը (եթե ապրում եմ վանքում)՝ ըստ կոնկրետ սահմանված օրվա:

Պատասխանատվությունն ու նպատակաուղղվածությունը, ինչպես արդեն նշվեց, ճյուղերն են այն ծառի, որ կոչվում է «ամբողջականություն»: Պատասխանատու մարդը մշտապես ներամբողջական մարդն է: Իսկ ներամբողջական մարդը խղճով է վարվում այն ամենի հետ, ինչը շրջապատում է իրեն եւ ինչը տեղի է ունենում իր հետ ու իր ներսում:

58. Որքա՞ն հաճախ եմ մոռանում այն, ինչը հանձնարարված է ինձ:

Մեր մոռացկոտությունը սովորաբար հետեւանք է այն բանի, որ մենք անպատասխանատվությամբ ենք վարվում այն խնդրանքների, ցանկությունների, կարգադրությունների հետ, որ տրվում են մեզ՝ գտնելով, որ մեզ համար մերն ավելի կարեւոր է (ինչը, որ եթե նույնիսկ մոռանում ենք, ապա անհամեմատ հազվադեպ):

59. Որքանո՞վ եմ պատրաստ նպատակադրված զբաղվել այն գործերով, որոնք ինձ առաջարկում է կյանքը:

Երբեմն այդ գործերը տունը կարգի բերելն է, երբեմն՝ արտադրական գործերը: Անպատասխանատու մարդը գործերով զվարճանում է: Նա փորձում է կյանքը վերածել համատարած տոնակատարության: Դա զգալի չափով երեւում է արդյունքներում:

60. Ի՞նչ բարեխղճությամբ եմ կատարում ինձ հանձնարարված գործը եւ արդյոք այդ գործին մի՞շտ եմ վերաբերվում համապատասխան ջանադրությամբ: Արդյոք վերափոխո՞ւմ եմ իմ աշխատանքը, եթե նրանում տեսնում եմ խոտան, թե՞ համարում եմ, որ այդպես էլ կլինի:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Քնարիկ ՂԱԶԱՐՅԱՆ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ

**հեռախոս՝ (0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 01. 11. 2006 թ.

**Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ**